դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ապրանքների (արտադրանքի) վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքները առաքվում են և սեփականության իրավունքը փոխանցվում է:

Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ:

Տոկոս

Տոկոսները ճանաչվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.15. Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտներ և ծախսեր

Գյուղատնտեսական գործունեությունը Ընկերության կողմից կենսաբանական ակտիվների կենսաբանական փոխակերպման և արտադրանքի ստացման կառավարումն է՝ վաճառքի կամ գյուղատնտեսական արտադրանքի կամ լրացուցիչ կենսաբանական ակտիվների փոխարկման նպատակով:

Ընկերության գյուղատնտեսական գործունեությունը ներառում է մասնավորապես միամյա կամ բազմամյա կուլտուրաների աճեցումը, պտղատու այգիների և տնկաղաշտերի մշակումը:

Եկամուտներ

Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտները ներառում են հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական գործունեությունից առաջացած մասնավորապես՝

- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են սկզբնական ճանաչման պահին կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից.
- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից առաջացած փոփոխություններից.
- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են բերքահավաքի (սկզբնական ճանաչման) պահին գյուղատնտեսական արտադրանքի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից:

Ծախսեր

Գյուղատնտեսական գործունեությունից ծախսերը ներառում են, հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական գործունեության համար կատարված մասնավորապես հետևյալների գծով ծախսերը՝ պաշարներ, աշխատավարձ, մաշվածություն և ամորտիզացիա, ոռոգման ջուր, հոսանք և ջեռուցում,

հիմնական միջոցների նորոգում և սպասարկում, մասնագիտական խորհրդատվություն, գործուղում, կորուստներ և փչացումներ:

4.16. Շնորհներ

Ճանաչում

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան հասույթի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Չափում

Շնորհները չափվում են ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

4.17. Փոխառության ծախսումներ

Ճանաչում

Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են:

4.18. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են), և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

4.19. Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ծանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ելամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես ելամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հաշվանցում

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

4.20. Սխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որտեղում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4.21. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

4.22. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի:

Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

4.23. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները առաջադրվում կամ հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

5. Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

Անընդհատության հիմունք. Ղեկավարությունը պատրաստել է սույն ֆինանսական հաշվետվությունները անընդհատության հիմունքի հիման վրա: Ղեկավարության այս դատողությունները հիմնված են Ընկերության ֆինանսական վիճակի, ընթացիկ պլանների, շահութաբերության և ֆինանսական ռեսուրսների մատչելիության, ինչպես նաև Ընկերության ապագա գործունեության նկատմամբ մակրոտնտեսական վերջին փոփոխությունների ազդեցության վերլուծության հիման վրա:

6. Հիմնական միջոցներ

000 դրամ	Հենքեր	Կառուցվածքներ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հաշվողական և համակարգչային տեխնիկա	Հողամասեր	Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր	Օգտագործման համար ոչ մատչելի բերքատու բույսեր	Ընդամենը
Սկզբնական արժեք												
31.12.2018թ. (աուդիտ չիրականացված)	7,696,715	1,058,140	1,399,742	1,078,732	12,458	485,611	29,145	12,992	223,230	825,065	349,099	13,170,929
Ձեռք բերում	44,930	32,066		70,013	6,310	10,053	108,806	1,885	21,170	966,025	1,072,251	2,333,509
Դուրսգրում	-	-	-	(20,767)	-	-	(1,024)	-	-	-	-	(21,791)
31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)	7,741,645	1,090,206	1,399,742	1,127,978	18,768	495,664	136,927	14,877	244,400	1,791,090	1,421,350	15,482,647
Ձեռք բերում	88,321	68,047	4,084	89,121	-	3,082	186,627	440	10,001	124,544	254,113	828,380
Դուրսգրում	-	(663)	-	-	-	-	(4,638)	-	(4,836)	-	(36,198)	(46,335)
31.12.2020թ.	7,829,966	1,157,590	1,403,826	1,217,099	18,768	498,746	318,916	15,317	249,565	1,915,634	1,639,265	16,264,692

Կուտակված մաշվածություն												
31.12.2018թ. (աուդիտ չիրականացված)	7,185	82,481	22,616	84,073	2,667	58,424	3,070	7,478	-	-	-	267,994
Տարեկան մաշվածություն	326,060	36,930	70,064	155,895	1,931	59,147	14,800	6,446	-	-	-	671,273
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	-	-	(5,744)	-	-	(1,689)	-	-	-	-	(7,433)
31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)	333,245	119,411	92,680	234,224	4,598	117,571	16,181	13,924	-	-	-	931,834
Տարեկան մաշվածություն	196,887	77,342	45,619	84,073	1,367	47,646	25,765	390	-	-	-	479,089
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն	-	(663)	-	-	-	-	-	-	-	-	-	(663)
31.12.2020թ.	530,132	196,090	138,299	318,297	5,965	165,217	41,946	14,314	-	-	-	1,410,260
Հաշվեկշռային արժեք												
31.12.2018թ.	7,689,530	975,659	1,377,126	994,659	9,791	427,187	26,075	5,514	223,230	825,065	349,099	12,902,935
31.12.2019թ.	7,408,400	970,795	1,307,062	893,754	14,170	378,093	120,746	953	244,400	1,791,090	1,421,350	14,550,813
31.12.2020թ.	7,299,834	961,500	1,265,527	898,802	12,803	333,529	276,970	1,003	249,565	1,915,634	1,639,265	14,854,432

Բերքատու բույսեր

Ընկերության ջերմոցային տնտեսությունը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, իսկ ինտենսիվ այգիները՝ Արմավիրի մարզի Երասխ գյուղում և Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում: Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում է գտնվում նաև Ընկերության սառնարանային տնտեսությունը:

Երասխ գյուղում՝

- խնձորի այգիներ՝ 32,51 հա տարածքով և 119 412 հատ տնկիով,
- ծիրանի այգիներ՝ 10,95 հա տարածքով և 17 926 հատ տնկիով,
- կեռասի այգիներ՝ 9,92 հա տարածքով և 28 480 հատ տնկիով:

Դդմաշեն գյուղում՝

- խնձորի այգիներ՝ 29,4 հա տարածքով և 114 150 հատ տնկիով:

Մաշվածություն

'000 դրամ	*Ծանոթ.*	*2020*	*2019* (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝		**479,089**	**671,273**
• արտադրական նշանակության	19	458,793	659,742
• վարչական նշանակության		5,797	11,531
• իրացման նշանակության		14,499	-

Գրավադրում

Վարկային պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրվել է Ընկերության սեփականությունը հանդիսացող անշարժ և շարժական գույքը (ծանոթ. 14):

Հիմնական միջոցների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

Այլ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ եղել են:
Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային հանձնառությունները կազմում են 230,928 հազար դրամ:
Ժամանակավոր պարապուրդի մեջ գտնվող հիմնական միջոցներ չկան:
Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 31.12.2020թ-ին կազմում է 15,785 հազար դրամ (31.12.2019թ-ին՝ 14,709 հազար դրամ):

7. Ոչ նյութական ակտիվներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2020թ*	*Մնացորդ 31.12.2019թ* (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	**2,997**	**14,200**
• հաշվապահական և այլ ծրագիր	1,731	1,960
• ստանդարտներ	593	11,494
• այլ	673	746

8. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

	'000 դրամ
Մնացորդ առ 01.01.2020թ. (աուդիտ չիրականացված)	**137,303**
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	436,657
Տարեկան մաշվածություն, այդ թվում	(35,564)
- արտադրական նշանակության	(15,463)
- վարչական նշանակության	(20,101)
Մնացորդ առ 31.12.2020թ.	**538,396**

Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	*'000 դրամ*
Մնացորդ առ 01.01.2020թ. *(աուդիտ չիրականացված)*	**121,644**
Պարտավորության ավելացում	654,615
Պարտավորության նվազում	(138,153)
Ծկրած տոկոսային ծախսեր	(171,907)
Կրած տոկոսային ծախսեր	25,790
Վճարված տոկոսներ	(24,176)
Մնացորդ առ 31.12.2020թ.	**467,813**

9. Պաշարներ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2020թ*	*Մնացորդ 31.12.2019թ* (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	**916,474**	**768,907**
• միամյա բույսեր	526,715	584,549
• գյուղատնտեսական արտադրանք	119,104	6,183
• գյուղատնտեսական նշանակության նյութեր	135,864	74,645
• հումք նյութեր	4,623	7,599
• պահեստամաս	747	271
• վառելանյութ	1,369	1,307
• շինանյութ	18,507	30,705
• այլ նյութեր	109,545	63,648

Սպառվող կենսաբանական ակտիվների (միամյա բույսեր) և գյուղատնտեսական արտադրանքի չափումը իրականացվում է «իրական արժեք հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով: Հաշվետու տարում արտադրվել է ընդամենը ելակ՝ 1.2 տն, դդմիկ 0.4 տն, լոլիկ՝ 8,337.1 տն, վարունգ՝ 27.7 տն, խնձոր՝ 664.1 տն, ծիրան՝ 26.5 տն, կեռաս՝ 11.3 տն: Բերքատու բույսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 6-ում:

2020թ. որպես ծախս ճանաչված պաշարների հաշվեկշռային արժեքը կազմել է 3,562,179 հազար դրամ (2019թ.-ին՝ 2,606,512 հազար դրամ):

10. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

'000 դրամ	Մնացորդ 31.12.2020թ.	Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	162,425	136,822
• նյութերի ձեռքբերման համար	160,827	82,101
• ծառայությունների ձեռքբերման համար	1,598	54,721

11. Առևտրական դեբիտորական պարտքեր

'000 դրամ	Մնացորդ 31.12.2020թ.	Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	119,857	102,800
• արտադրանքի վաճառքից	107,331	78,972
• հիմնական միջոցների վաճառքից	20,400	23,828
- *արժեզրկման գծով պահուստ*	*(7,874)*	-

12. Դրամական միջոցներ

	Մնացորդ 31.12.2020թ.				Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)			
	Եվրո	ԱՄՆ դոլար	Ռուբլի	'000 դրամ	Եվրո	ԱՄՆ դոլար	Ռուբլի	'000 դրամ
Ընդամենը, այդ թվում՝	41,804	44,584	4,105,643	83,262	8,520	496	840,452	24,850
• դրամարկղում	-	-	-	490	-	-	-	12
• բանկում՝ արժույթով	-	-	-	3,850	-	-	-	13,493
• բանկում՝ արտարժույթով	41,804	44,584	4,105,643	78,922	8,520	496	840,452	11,345

13. Սեփական կապիտալ

Սեփական կապիտալը (զուտ ակտիվները) ձևավորված է կանոնադրական կապիտալից (թողարկված և տեղաբաշխված (վճարված) կապիտալ), չբաշխված շահույթից (վնասից)՝ ներառյալ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթը:

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը կազմվել է մասնակիցների ձեռք բերած հասարակ (սովորական) բաժնեմասերի անվանական արժեքից: Յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնեմաս տալիս է իր սեփականատեր հանդիսացող մասնակցին միևնույն իրավունքները:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 77,110 հազար (յոթանասունյոթ միլիոն հարյուր տաս հազար) ՀՀ դրամ: Մասնակիցների բաժնեմասերի չափը որոշվում է տոկոսներով: Կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և վճարված: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալը ավելացել է 24,000 հազար (քսանչորս միլիոն) ՀՀ դրամով՝ լրացուցիչ ավանդների ներդրումների միջոցով:

Վարկային պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրվել է նաև Ընկերության հիմնադիրների բաժնեմասերը (ծանոթ. 14):

Կուտակված վնաս

Ընկերության 2020թ. տարվա վնասը կազմում է 1,503,057 հազար դրամ: 31.12.2020թ. դրությամբ Ընկերության կուտակային վնասը կազմել է 2,387,255 հազար դրամ: Հաշվետու տարվա վնասները պայմանավորված են արտարժույթի փոխարժեքային տարբերություններից (1,103,173 հազար դրամ), կորոնավիրուսի ու պատերազմի հետևանքով երկրում ստեղծված տնտեսական վատ վիճակով: Ներկայումս Ընկերությունը ծածկում է դրամական պակասուրդը վարկերի, փոխառությունների և գործառնական ավելի լավ ցուցանիշների միջոցով: Գնահատումներ կատարելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը ընդունակ է շարունակելու իր գործառական գոյությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս շարունակում է կիրառել անընդհատության հիմունքը:

Էմիսիոն եկամուտ

Հաշվետու տարում Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ մասնակիցների կողմից կատարվել է 1,200,000 հազար (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամի ընդհանուր արժեքով լրացուցիչ ավանդների ներդրում՝ յուրաքանչյուր մասնակցի կողմից իր ունեցած բաժնեմասին համամասնորեն: Արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը ավելացել է 24,000 հազար (քսանչորս միլիոն) ՀՀ դրամով, իսկ 1,176,000 հազար (մեկ միլիարդ հարյուր յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ տարբերությունը ուղղվել է Էմիսիոն եկամուտ:

Պահուստային կապիտալ

Ընկերությունում ստեղծվում է պահուստային կապիտալ կանոնադրական կապիտալի 10 տոկոսի չափով: Այս կապիտալի ձևավորումն իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև նախատեսված չափին հասնելը: Եթե պահուստային կապիտալը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ կապիտալին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:
Պահուստային կապիտալն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

14. Վարկեր

'000 դրամ	Տոկոսադրույք	Մարման ժամկետ	Մնացորդ 31.12.2020թ.	Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)
Ընդամենը վարկեր, այդ թվում՝			**8,379,607**	**7,381,374**
ՀՀ դրամով վարկի ոչ ընթացիկ մաս			*7,717,885*	*7,296,374*
ՀՀ դրամով վարկեր	12%	24/09/23	35,000	75,000
ՀՀ դրամով վարկեր	12%	04/10/21	-	110,000
ՀՀ դրամով վարկեր	12%	04/10/23	108,000	216,000
ՀՀ դրամով վարկեր	10%	19/12/24	1,611,111	1,666,667
ՀՀ դրամով վարկեր	6%	03/06/22	100,057	-
ՀՀ դրամով վարկեր	8.5%	21/05/25	20,606	-

ԱՄՆ դոլարով վարկեր	7%	02/02/21	600	600
ԱՄՆ դոլարով վարկեր	6%	07/11/23	3,997	4,000
Եվրոյով վարկեր	5.5%	24/09/24	5,367	5,625
22 դրամով վարկի ընթացիկ մաս			*662,035*	*85,000*
22 դրամով օվերդրաֆտ	12.5%	18/03/20	-	85,000
ԱՄՆ դոլարով վարկեր	8.75%	17/02/21	501	-
Կարճաժամկետ մաս	-	-	384,048	-
Հաշվեգրված տոկոս			*16,170*	*9,723*

Առաջին երեք 12 տոկոս տոկոսադրույքով ստացված վարկերից 7-10 տոկոսը սուբսիդավորվում է 22 Կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի Գյուղական ֆինանսավորման կառույցը հակակարկտային ցանցի, կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման, ինտենսիվ պտղատու այգիների հիմնման նպատակով:

Գրավադրում

Ընկերությունը Արդշինբանկ ՓԲԸ-ի հետ 13/10//17թ-ին կնքված ԲՎԳՊ17/33-01 գլխավոր պայմանագրով 4,000,000,000 (չորս միլիարդ) 22 դրամի համագործակցության պայմանագիր են կնքել, որի դիմաց գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ հասցեի 296,366 քմ գյուղատնտեսական նշանակության հողամաս և Ընկերությանը պատկանող շարժական գույք: Այնուհետև 15/11/18թ-ին համագործակցության գումարը 10,000,000,000 (տաս միլիարդ) 22 դրամի է հասել, որի դիմաց գրավադրվել է Ընկերության հիմնադիրների բաժնեմասերը և շարժական գույքերը:

Գլխավոր ՈՒՎԿ-ից ստացած վարկի դիմաց հաջորդող գրավ է դրվել Արդշինբանկ ՓԲԸ-ի հետ 13/10//17թ-ին կնքված ԲՎԳՊ17/33-01 պայմանագրով սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ հասցեի 296,366 քմ գյուղատնտեսական նշանակության հողամաս:

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցված վարկային պարտավորություններ չունի:

15. Փոխառություններ

'000 դրամ	*Մնացորդ 31.12.2020թ*	*Մնացորդ 31.12.2019թ (աուդիտ չիրականացված)*
Ընդամենը, այդ թվում՝	**8,495,277**	**8,909,269**
- կապակցված կողմերի գծով	8,495,277	8,909,269

	Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)	*Ավելացում*	*Նվազեցում*	*Մնացորդ 31.12.2020թ.*
Ընդամենը, այդ թվում՝	**8,909,269**	**836,008**	**1,250,000**	**8,495,277**
Արման Աբրահամյան	6,107,564	474,689	1,250,000	5,332,253
Ռուբեն Հարությունյան	1,217,189	121,470	-	1,338,659
Հենրիկ Հարությունյան	1,510,516	65,622	-	1,576,138
Արսեն Հարությունյան	74,000	174,227		248,227

Ընկերությունը անտոկոս փոխառությունների ստացման բազմաթիվ գործարքներ է կատարել մասնակիցների հետ: Գործարքների հիմնական նպատակը դրամական միջոցների հոսքերի և մնացորդների օպտիմալ կառավարումն է: Շատ դեպքերում, ելնելով ընթացիկ իրավիճակի անհրաժեշտությունից, այս

փոխառությունների ստացման և մարման ժամկետներն ու գումարները էականորեն տարբերվում են պայմանագրերով սկզբնապես նախատեսված գումարներից և ժամկետներից:
Փաստացիորեն Ընկերությունը չի վերահսկում փոխառությունների ստացման և մարման ժամկետներն ու գումարները, և հաշվետու ամսաթվին հաջորդող տասներկու ամիսների ընթացքում հնարավոր է կատարի փոխառությունների չպլանավորված մարումներ՝ ելնելով գործառնական անհրաժեշտությունից:
Ուստի Ընկերության անտոկոս փոխառությունների գծով հնարավոր չէ կատարել սպասվող դրամական հոսքերի արժանահավատ կանխատեսում, որով նման փոխառությունները չեն գնահատվում:

16. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

'000 դրամ	Մնացորդ 31.12.2020թ.	Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	591,465	230,265
• նյութերի ձեռքբերումից	119,746	102,682
• ծառայությունների ձեռքբերումից	240,791	102,285
• հիմնական միջոցների ձեռքբերումից	230,928	25,298

Առևտրական կրեդիտորական պարտքերը տոկոսային չեն և, որպես կանոն, մարվում են 30 օրվա ընթացքում:

17. Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ

'000 դրամ	Մնացորդ 31.12.2020թ.		Մնացորդ 31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)	
	կանխավճար	պարտավորություն	կանխավճար	պարտավորություն
Ընդամենը, այդ թվում՝	68,790	64,977	19,034	116,725
• միասնական հաշիվ	272	-	367	-
• ԱԱՀ (հետաձգված)	66,005	51,735	18,555	101,653
• եկամտային հարկ	-	9,579	-	12,177
• պարտադիր սոց.ապահով.	-	950	-	895
• այլ	2,513	2,713	112	2,000

18. Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություններ

'000 դրամ	Մնացորդ 31.12.2020թ	Մնացորդ 31.12.2019թ (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	20,531	12,290
• աշխատավարձի գծով	-	13
• կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով	20,531	12,277

19. Վաճառքներ

Հասույթի ուղղություններ

Ընկերությունը հասույթը ստացել է գնորդների հետ պայմանագրերից: Դրանք հիմնականում առաջացել են գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից:

Հաշվետու տարում վաճառվել է ընդամենը ելակ՝ 1.2 տն, դդմիկ 0.4 տն, լոլիկ՝ 8,054.5 տն, վարունգ՝ 27.7 տն, խնձոր՝ 187.7 տն, ծիրան՝ 26.5 տն, կեռաս՝ 11.3 տն:

'000 դրամ	*2020թ.*			*2019թ.* (աուդիտ չիրականացված)		
	Հասույթ	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*Հասույթ*	*Ինքնարժեք*	*Շահույթ*
Ընդամենը, այդ թվում՝	3,612,621	(3,265,820)	346,801	3,389,285	(2,984,107)	405,178
• արտադրանքի վաճառքից	3,612,621	(3,265,820)	346,801	3,388,005	(2,983,357)	404,648
• ծառայությունների մատուցումից	-	-	-	1,280	(750)	530

Հասույթի մանրամասնեցում

Արտադրանքի (ծառայության) տեսակ	*Տարածաշրջան*	*Գնորդի տեսակ*	*Պայմանագրի տեսակ*	*Պայմանագրի տևողություն*	*Արտադրանքի (ծառայության) փոխանցման ժամկետ*	*Հասույթ*
Վաճառված արտադրանքից	Արտերկիր	ոչ պետական հատվածի գնորդներ	փոփոխուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի պահին գնորդին փոխանցված արտադրանք	3,273,133
Վաճառված արտադրանքից	ՀՀ	ոչ պետական հատվածի գնորդներ	փոփոխուն գնով կնքված պայմանագիր	կարճաժամկետ պայմանագիր	ժամանակի որոշակի պահին գնորդին փոխանցված արտադրանք	339,488

Պայմանագրի գծով մնացորդներ

'000 դրամ	*2020*	*2019*
• պայմանագրերի գծով դեբիտորական պարտքեր	119,857	102,800

Կատարման պարտականություններ, հասույթի ճանաչման քաղաքականություն

Անվանումը	*Կատարման պարտականության բնույթը և վճարման ժամկետը*	*Հասույթի ճանաչման քաղաքականությունը*
Գյուղատնտեսական արտադրանքի վաճառք	Ընկերությունը իրականացնում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն: Վճարման ժամկետը հիմնականում սահմանվում է պայմանագրերով:	Գնորդը ստանում է արտադրանքները պարբերականությամբ և արտադրանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցվում է ժամանակի տվյալ պահին: Յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ կատարվում է վաճառքների որոշակիացում, չափում, ներկայացում, ընդունում և հասույթի վերջնական ճանաչում:

20. Գյուղատնտեսական գործունեություն

Ընկերության գյուղատնտեսական գործունեությունը ներառում է մասնավորապես միամյա կամ բազմամյա կուլտուրաների աճեցումը, պտղատու այգիների և տնկադաշտերի մշակումը:

Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտները ներառում են հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական գործունեությունից առաջացած մասնավորապես՝

- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են սկզբնական ճանաչման պահին կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից,
- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին կենսաբանական ակտիվի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից առաջացած փոփոխություններից,
- Օգուտները կամ կորուստները, որոնք առաջանում են բերքահավաքի (սկզբնական ճանաչման) պահին գյուղատնտեսական արտադրանքի՝ իրական արժեքով (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) չափումից:

Գյուղատնտեսական արտադրանքի և սպառվող կենսաբանական ակտիվների (լոլիկ, խնձոր, ելակ, վարունգ, ծիրան, կեռաս, միամյա բույսեր) իրական արժեքի չափումը իրականացվում է խմբավորման միջոցով՝ ըստ նշանակալի հատկանիշների (տեսակ, տարիք, որակ): Վաճառքի ծախսումները չեն ներառում տրանսպորտային ծախսերը:

'000 դրամ	*2020*	*2019* (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	3,763,343	3,530,689
• լոլիկից	3,336,293	3,130,040
• խնձորից	180,701	169,530
• միամյա բույսերից	219,011	205,471
• այլ	27,338	25,648

Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր

Գյուղատնտեսական գործունեությունից ծախսերը ներառում են հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսական գործունեության համար կատարված ծախսերը:

'000 դրամ	*2020*	*2019* (աուդիտ չիրականացված)
Ընդամենը, այդ թվում՝	(2,868,630)	(2,691,288)
• նյութերից	(469,537)	(440,510)
• աշխատավարձից	(306,651)	(287,693)
• մաշվածությունից և վերանորոգումից	(318,714)	(299,011)
• ջեռուցումից և հոսանքից	(775,578)	(727,631)
• միամյա բույսերի և այգիների վրա կատարվող ընթացիկ ծախսերից	(949,651)	(890,942)
• ծառայություններից	(14,299)	(13,415)
• այլ	(34,200)	(32,086)

21. Այլ եկամուտներ

'000 դրամ

	2020	2019 (աուդիտ չիրականացված)
Այլ եկամուտներ (օգուտներ) ընդամենը, այդ թվում՝	121,188	131,850
• պետության կողմից տրված դրամաշնորհներից	31,251	43,420
• հիմնական միջոցների վաճառքից	25,891	20,880
• կրեդիտորական պարտքի դուրսգրումից	16,449	40,748
• անհատույց ստացված ակտիվներից	44,017	21,105
• այլ	3,580	5,697

'000 դրամ

	2020	2019
Այլ ծախսեր (վնասներ) ընդամենը, այդ թվում՝	(330,553)	(297,671)
• խոտանված, ոչնչացված ապրանքներից	(156,987)	(239,401)
• տույժերից, տուգանքներից	(54,835)	(1,030)
• արտարժույթի փոխարկումից	(18,981)	(27,055)
• հիմնական միջոցների վաճառքից	(45,672)	(16,035)
• անհատույց տրված ակտիվներից	(10,300)	(13,486)
• դեբիտորական պարտքի դուրսգրումից	(43,165)	-
• այլ	(613)	(664)

22. Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)

2020թ.-ին ֆինանսական եկամուտները առաջացել են բանկային հաշիվներում դրամական միջոցների մնացորդների եկատմամբ հաշվարկված տոկոսներից՝ 32 հազար դրամ:

'000 դրամ

	2020	2019 (աուդիտ չիրականացված)
Ֆինանսական ծախսեր ընդամենը, այդ թվում՝	(592,570)	(674,009)
• վարկերի տոկոսներ	(592,570)	(674,009)

23. Շահութահարկ

Շահութահարկի դրույքաչափը 2020թ. 18% է (2019թ.-ին՝ 20%):

'000 դրամ

	2020	2019 (աուդիտ չիրականացված)
• **շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար**, այդ թվում՝	(5,427)	69
○ ընթացիկ հարկի գծով	-	-
○ հետաձգված հարկի գծով	(5,427)	69
• **ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված շահութահարկի գումար**	-	-

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում

'000 դրամ

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում	*2020*	*2019* (աուդիտ չիրականացված)
Հարկի կիրառվող դրույք	18%	20%
Շահույթը մինչև հարկումը	(1,495,702)	(325,703)
Ակնկալվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	(1,495,702)	(325,703)
Հարկվող շահույթը	-	-
Ընթացիկ հարկ	-	-
Հարկի գործող միջին դրույքը	-%	-%

Ընկերությունը օգտվում է Հարկային Օրենսդրությամբ նախատեսված գյուղատնտեսական արտադրանքի գծով շահութահարկի ազատման արտոնությունից:

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

'000 դրամ

	Ծանոթ.	*(+) Հարկվող ժամանակավոր տարբերություն (-) Նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություն* 2020	2019 (աուդիտ չիրականացված)
Հիմնական միջոցներ	6	46,177	(103)
Առևտրական դեբիտորական պարտքեր (արժեզրկման պահուստ)	11	(7,874)	-
Աշխատավարձի և այլ կարճ.հատուցումների գծով պարտավորություններ	18	(20,531)	(12,277)
Ընդամենը		17,772	(12,380)
Հարկի դրույքը		18%	18%
Հետաձգված հարկային պարտավորություններ (ակտիվներ)		3,199	(2,228)

«Հիմնական միջոցներ» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է հիմնական միջոցի միավորի՝ ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով տարբեր օգտակար ծառայության ժամկետների կիրառումից:

«Առևտրական դեբիտորական պարտքեր» հոդվածում նվազեցվող ժամանակավոր տարբերությունը առաջացել արժեզրկման գծով պահուստից:

«Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորություն» հոդվածում ժամանակավոր տարբերությունը առաջացել է աշխատակիցների կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով:

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

24. Շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

'000 դրամ	*Տանոթ.*	*2020*	*2019* (աուդիտ չիրականացված)
Հասույթ	19	3,612,621	3,389,285
Այլ եկամուտներ	20	121,188	131,850
Արտադրանքի մնացորդների փոփոխություն		119,104	-
Օգտագործված հումք և նյութեր	9	(1,015,352)	(952,582)
Աշխատավարձ և կարճ. այլ հատուցումներ		(532,940)	(523,148)
ՀՄ-ների մաշվածություն	6	(479,089)	(671,273)
ՈՆԱ-ների ամորտիզացիա	7	(11,803)	(771)
Ջերմային էներգիան, էլ. էներգիա, բնական գազ		(775,578)	(727,631)
Բեռնափոխադրում		(365,458)	(342,865)
Այլ ծառայություններ		(65,111)	(61,086)
Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ	11	(7,874)	-
Գործառնական այլ ծախսեր		(401,628)	126,514
Գործառնական շահույթ		198,080	368,293
Ֆինանսական ծախսեր	22	(592,538)	(674,009)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(1,103,172)	(19,987)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		(1,497,630)	(325,703)
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	23	(5,427)	69
Զուտ (վնաս) շահույթ		(1,503,057)	(325,634)

25. Իրական արժեք. ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը

Իրական արժեք

Հիմնական ֆինանսական ակտիվներն են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ վարկերը, վարձակալության գծով պարտավորությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով և դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են հաշվեկշռային արժեքներին:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմունքներ

Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպման համար և վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկողության մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ընկերությունը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

Պարտքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) հետ:
Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Դեբիտորական պարտքի մարումը իրականացվում է կանոնավոր՝ հաջորդ ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է բոլոր գնորդների համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Հաշվարկները սահմանվում են անցյալում փաստացի կրած վնասների հիման վրա: Պարտքերի համար ապահովություն (գրավ) չի պահանջվում: Գնորդը չունի արտաքին պարտքային վարկանիշ:
Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերությունը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը:
Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չգեղչված պայմանագրային վճարումների վրա, ինչպես նաև հաշվեկշռային արժեքները:

'000 դրամ

31.12.2020թ.	Պայմանագրային վճարումներ				Հաշվեկշռային արժեք
	Պահանջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը	
Վարկեր		662,035	7,717,885	8,379,921	8,379,921
Փոխառություններ		-	8,495,277	8,495,277	8,495,277
Ֆին.վարձակալության գծով պարտավորություններ		75,416	392,397	467,813	467,813
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		591,465	-	591,465	591,465
Այլ պարտավորություններ		88,771	-	88,771	88,771

'000 դրամ

31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)	Պայմանագրային վճարումներ				Հաշվեկշռային արժեք
	Պահանջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը	
Վարկեր	-	85,000	7,296,374	7,381,374	7,381,374
Փոխառություններ	-	-	8,909,269	8,909,269	8,909,269
Ֆին.վարձակալության գծով պարտավորություններ		-	121,644	121,644	121,644
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	230,265	-	230,265	230,265
Այլ պարտավորություններ	-	131,367	122,436	253,803	253,803

Շուկայական ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժութային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

Արժութային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում է արտարժույթով վարկերը և փոխառությունները: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկեր՝ Եվրո, ԱՄՆ դոլար և Ռուսական ռուբլին:

Ընկերությունը ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված	*USD*		*EUR*		*RUB*	
	2020	*2019*	*2020*	*2019*	*2020*	*2019*
Ընթացիկ ակտիվներ						
Առևտրական դեբիտորական պարտքեր	77,354	-	-	-	8,237,895	7,569,884
Ընթացիկ պարտավորություններ	-	-	-	-	-	-
Վարկեր	5,097,856	4,600,000	5,453,804	5,625,000	-	-
Փոխառություններ	7,565,000	7,180,000	100,000			
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-		160,302	109,218	-	-
Զուտ հաշվեկշիռ	*(12,585,502)*	*(11, 780,000)*	*(5,714,106)*	*(5,734,218)*	*8,237,895*	*7,569,884*

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

22 դրամ	*31.12.2020*	*31.12.2019*
1 ԱՄՆ դոլար	522.59	479.70
1 Եվրո	641.11	537.26
1 Ռուբլի	7.02	7.77

Աղյուսակում ներկայացված է ԱՄՆ դոլարի, Եվրոի փոխարժեքի հնարավոր փոփոխության նկատմամբ զգայունությունը՝ այլ փոփոխականների հաստատուն լինելու դեպքում: Ընկերության նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը պայմանավորված է դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների փոփոխություններով: Այլ արժույթների փոփոխությունների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը էական չէ:

	Արտարժույթ	Փոխարժեքի փոփոխություն	Նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը ('000 դրամ)
2020թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	328,852,874/(328,852,874)
2019թ.	ԱՄՆ դոլար	+5%/-5%	282,543,300/(282,543,300)
2020թ.	Եվրո	+6%/-6%	219,802,230 (219,802,230)
2019թ.	Եվրո	+6%/-6%	184,845,958/(184,845,958)

Տոկոսադրույքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված տոկոսադրույքով են: Ղեկավարությունը չունի ձևակերպված քաղաքականություն ֆիքսված կամ փոփոխական տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը: Նոր տոկոսակիր ֆինանսական պարտավորությունների ներգրավման դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա, որոշելու, թե որ տիպի տոկոսադրույքը ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև ակնկալվող մարման ժամկետի ընթացքում:

Ընկերությունը ունի ֆիքսված տոկոսադրույքով տոկոսակիր ֆինանսական գործիքների հետևյալ կառուցվածքը.

'000 դրամ	Հաշվեկշռային արժեք 31.12.2020թ.	31.12.2019թ. (աուդիտ չիրականացված)
Ֆինանսական ակտիվներ	-	-
Ֆինանսական պարտավորություններ	8,847,734	7,503,017
Զուտ հաշվեկշիռ	*(8,847,734)*	*(7,503,017)*

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:
Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

26. Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման հիմնական նպատակն է սեփական կապիտալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Ընկերության գործունեության աջակցության և մասնակիցների շահույթը մաքսիմալացնելու նպատակով:
Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան:

Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն

'000 դրամ	2020	2019 (աուդիտ չիրականացված)
Ընդամենը պարտավորություններ	18,019,983	16,771,567
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	83,262	24,850
Ընդամենը զուտ պարտք	**17,936,721**	**16,746,717**
Ընդամենը սեփական կապիտալ	**(1,134,145)**	**(831,088)**
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն	-	-

27. Կապակցված կողմերի բացահայտումներ

Կապակցված կողմերի հետ գործարքներ

Մասնակիցները Ընկերությանը տրամադրել են անտոկոս, երկարաժամկետ փոխառություններ, որոնց վերաբերյալ բացահայտումներ կատարվել են ծանոթագրություն 15-ում:

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2020թ. կազմել է 66,852 հազար դրամ և 2019թ.՝ 66,852 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

28. Պայմանականություններ

Բիզնես միջավայր

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքական և տնտեսական փոփոխությունների փուլում: Չկան բիզնեսի և վերահսկողական այնպիսի զարգացած ենթակառուցվածքներ, ինչպիսիք կան ավելի հասուն շուկայական տնտեսություններում: Ավելին, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեությունը և վերջիններս ոչ միշտ են ճիշտ արտացոլում ֆինանսական գործիքների արժեքը: Հետագա տնտեսական աճի հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է և տարածաշրջանային անկայունությունը: Աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ, ինչն ազդում է համընդհանուր գնողունակության և պահանջարկի վրա:
Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա բիզնես միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատումը: Բիզնես միջավայրի ապագա փոփոխությունները կարող են տարբերվել Ղեկավարության գնահատումներից:

Ապահովագրություն

ՀՀ-ում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում: Ներմուծվում են զարգացած երկրներում վաղուց կիրառելի ապահովագրական գործիքներ:
Հաշվետու տարվա վերջի դրությամբ Ընկերությունը իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ):
Քանի դեռ չի իրականացված ակտիվների ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների վրա:

Դատական հայցեր

2020թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

Հարկերի հաշվառման անորոշություններ և պայմանականություններ

ՀՀ հարկային համակարգը, հարկային հարաբերությունները կարգավորվում է հիմնականում ՀՀ հարկային օրենսգրքով: Օրենսդրությունում փոփոխությունները, պաշտոնական պարզաբանումները կամ իրազեկումները, դատական մարմինների որոշումները, օրենսդրության տարընթերցումները, տարաբնույթ մեկնաբանությունները առաջացնում են հարկային պարտավորությունների գնահատման անորոշություններ: Ներկայացված և վճարված հարկային պարտավորությունների ճշտությունը ենթակա է ստուգման հարկային մարմինների կողմից, որոնք խախտումների համար իրավասու են առաջադրել տույժեր, տուգանքներ: Հարկային պարտավորությունները չեն կարող փոփոխվել, եթե դրանք վերաբերում են երեք տարուց ավել վաղեմությանը:

Ղեկավարությունը որոշում է, թե արդյոք հարկավոր է դիտարկել յուրաքանչյուր հարկային անորոշությունն առանձին կամ մեկ և ավելի հարկային անորոշությունների հետ միասին՝ կախված նրանից, թե որ մոտեցումն է թույլ տալիս լավագույնս կանխատեսել անորոշության լուծումը: Ղեկավարությունը ենթադրում է, որ հարկային

մարմինը կստուգի այն գումարները, որոնք նա իրավունք ունի ստուգելու և այդ ստուգումները կատարելիս՝ կունենա համապատասխան տեղեկություններին վերաբերող ամբողջական տեղեկատվություն:

Ղեկավարությունը գտնում է, որ ճիշտ է ճանաչել հարկային պարտավորությունները: Այնուամենայնիվ, հարկային մարմինը կարող է ունենալ Ընկերության կողմից հաշվարկված և ներկայացված հարկային պարտավորությունների վերաբերյալ այլ մեկնաբանություններ, որոնք կարող են ի հայտ գալ ստուգումների, ուսումնասիրությունների ընթացքում:

29. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից (31.12.2020թ) հետո մինչև վավերացման ամսաթիվը (24.06.2021թ.) ընկած ժամանակահատվածում:

30. Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2021թ. հունիսի 24-ին՝ տնօրեն Ռոբերտ Կոծինյանի և գլխավոր հաշվապահ Տիգրան Օրբելյանի կողմից:

Տնօրեն Ռոբերտ Կոծինյան

Գլխավոր հաշվապահ Տիգրան Օրբելյան